

Հաստատում եմ

Խաչատուր Աբովյանի անվան իսպանական պետական
մանկավարժական համալսարանի ղեկավար,
պրոֆեսոր Աբովյանի Գևորգյան



ԿԱՐՇԻՔ

Խաչատուր Աբովյանի անվան

իսպանական պետական մանկավարժական համալսարանի

Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի

2024թ. հունվարի 8 հ.9 նիստի

Նաիրա Խաչիկի Նազարյանի

«Եսայի Նշեցու Գլաճորի ավետարանը (Վենետիկ հմր. 1917) և

Թորոս Տարունացու արվեստը»

ԺԷ.00.03 «Գերպարվեստ, ղեկորատիվ և կիրառական արվեստ, ղիգայն»

մասնագիտությամբ

արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ատենախոսության վերաբերյալ

Նիստին մասնակցել են արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու Ս. Գրիգորյանը, բանասիրական գիտությունների ղեկավար, պրոֆեսոր Ս. Աղաբաբյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ա. Բաղդասարյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ա. Մելիքյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ա. Համբարյանը, արվեստագիտության թեկնածու, ասիստենտ Ա. Առաքելյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Իսկոյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Զ. Մալոյանը, ասիստենտ Վ. Գամաղելյանը:

Ատենախոսությունը ուսումնասիրում է Թորոս Տարունացու կողմից կատարված առաջին նկարագարող աշխատանքը: Երբեխցե այս թեման ինքնուրույն ուսումնասիրության չի արժանացել և այդ բացը լրացնում է ներկայացված ուսումնասիրությունը:

Ներկայացված է ծավալուն և բազմակողմանի ուսումնասիրություն:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, Լեզուակառուցությունից, գրականության ցանկից, հավելվածից:

Ներածության մեջ ներկայացված են պահանջվող բոլոր դրույթները՝ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, մշակվածության աստիճանը, գիտական նորույթն ու մեթոդները:

Առաջին գլուխը կրում է «Թորոս Տարոնացին՝ Գլաձորի համալսարանի XIV դարասկզբի նշանավոր ներկայացուցիչը» խորագիրը: Այն բաղկացած է հինգ ենթագլուխներից, որոնցում ներկայացված են Տարոնացու գործունեությունը համալսարանում, Գլաձորի համալսարանի և նրա մանրանկարչական դպրոցի նշանակությունն ու դերը միջնադարյան Հայաստանի կյանքում, հայ մանրանկարչության հոսանքներն ու ուղղությունները, Տարոնացու ձեռագրերի պատկերագրության համակարգը, Թորոս Տարոնացու արվեստի ուսումնասիրության ընթացքում ի հայտ եկած անճշտություններն ու տարաձայնությունները: Առավել արժեքավոր են առաջին և վերջին երկու ենթագլուխները, հատկապես հետազոտության ընթացքում ի հայտ եկած անճշտությունների և տարաձայնությունների հիմնավորումները, որոնք տրված են աստեղախոսության հեղինակի կողմից:

Երկրորդ գլուխը կրում է «1307թ. «Շաայի Լչեցու Գլաձորի ավետարանը». Պատկերագրությունն ու ոճական առանձնահատկությունները» խորագիրը: Այն ունի յոթ ենթագլուխներ, որոնցում մանրակրկիտ ներկայացված է ուսումնասիրվող ձեռագիրը, ուսումնասիրված են նրա կառուցվածքն ու բոլոր նկարագրող Լչեյը, դիտարկված են համապատասխան թեմատիկ շարքերը, կատարված է պատկերների ոճական վերլուծություն: Առավել հետաքրքրական են թեմատիկ գուգորդումները կանոնիկ և պարականոն Ավետարանների միջև, դրանց տեսողական մարմնավորումները Տարոնացու արվեստում, դրանցում որոշ տարրեր և պատկերներ կարծրատիպային են և հանդիպում են նկարչի ստեղծագործական ամբողջ ուղու ընթացքում, այսուհանդերձ նրանք չեն կրկնվում, այլ նկարիչը կիրառում է նոր լուծումներ և մեկնաբանություններ: Համեմատականներ են տարված Մարգիս Պիձակի և Թորոս Տարոնացու պատկերագրողման և պատկերագրական տիպերի միջև, դրանք ուսումնասիրվել են ձեռագրից ձեռագիր, և դրա հիման վրա նկարիչների գործունեությունը համեմատակի է: Լուսանցագրադերում ոսկե ֆոնի վրա ներկայացված են կենդանակերպ, թռչնակերպ և

մարդակերպ հարդարանքներ, ինչը հատուկ է Տարոնացու արվեստին: Դիտարկվում է պլոմենների բացահայտման նպատակով կիրառված պատկերային պլանները, ինչը նկարագարող թերթին հաղորդում էր հարաբերական խորություն: Ատենախոսը դիտարկում է ներկայացված կերպարների համաչափություններն ու գտնային առանձնահատկությունները, բացահայտելով դրանց անկրաժեշտությունը նկարչի տեսանկյունից:

Երրորդ գլուխը կրում է «Թորոս Տարոնացու հասուն և ու շրջակի ստեղծագործությունները որպես 1307թ. «Նսայի Նչևցու Գլաձորի ավետարանի» պատկերագարդման զարգացման արդյունք» խորագիրը և ունի ութ ենթագլուխներ: Ուսումնասիրման առարկա են հանդիսանում Թորոս Տարոնացու ծաղկած այլ ձեռագրեր, հիմնավորվում է նկարչի նկարագրողած մատյանների թվաքանակը, դիտարկվում են Հին կտակարանային տեսարանները, դիտարկվում են պատկերների խորանների առանձնահատկությունները, ավետարանիչների կերպարների համեմատական առանձնահատկությունները, տիտղոսաթերթերը, տոնական շարքը, Հայտնության և Գործք Առաքելոցի պատկերագարդումները, հետագա ձեռագրերի պատկերների ոճական վերլուծությունը: Կարևորված է Թորոս Տարոնացու որպես ժամանակի կիրթ և զարգացած անձ լինելու փաստը, ինչի շնորհիվ Տարոնացին կարողացավ սինթեզել գոյություն ունեցող մանրանկարչական դպրոցներն ու ավանդույթները, սակայն չդարձավ դրանց կոյր հետևորդը այլ ստեղծեց սեփական սրտահայտչալեզուն:

Աշխատանքն ամփոփված է ընդհանրացված կարակացությունով:

Ատենախոսության մեջ առանձին հավելվածով ներկայացված են պատմական մեջբերումներ և ատենախոսության հեղինակի կողմից կարևորված բազմաթիվ հիմքեր:

Օգտագործված գրականության ցանկը բաղկացած է 141 աղբյուրից, որում առանձին են ներկայացված գրքերը, հոդվածները, էլեկտրոնային աղբյուրները: Առանձին ներկայացված են ուսումնասիրված ձեռագրերը: Հավելվածում ներկայացված են աշխատանքում ուսումնասիրվող և մեջբերված 87 վերատպություններ:

Կատարված է ծավալուն, համալիր ուսումնասիրություն, որում ներկայացված է Թորոս Տարոնացու ստեղծագործական ուղու կայացման պատմական ընթացքը:

Աշխատանքին ներկայացվող դիտողությունները կառուցվածքային բնույթի են.

